

փաք ունին ազգերնուն զարգացմանն ու պայծառութեանը, որուն համար եւ սրտի մտօք պիտի աշխատին : Այս գովելի վախճանին հասնելու ուսումնական կարողութիւն չափակիր իրենց, ինչպէս որ մէջերնէն ոմանց այլ եւ այլ անգամ Աղաւնուոյ մէջ հրատարակած ինքնաստեղծ հատուածներէն ու գեղեցիկ բարգմանութիւններէն քաջայտ է. քաղաքական պաշտպանութիւն ու դրամական ձեռնտուութիւն եւս կրխուտանան իրենց մէծապատի եւ ազգասէր Աղայք Եսայի Դրանխուեան, Կարապետ Խաչիկեան, Յակոր Պըլըլիեան, Մսերեան Յովիաննէս եւ Աստուածատուր, Յովիաննէս Տոնիկի Զարան, եւ այլք. այնպէս, որ անտարակոյս եմք, շատ չանցնիր այս գիտուն եւ ազգասէր պատանեկաց անդուչ ջանիւքը Մոլտաւիոյ մեր ազգայինք հայկական ուսումնականութեան մէջ փառաւոր տեղի մը պիտի ունենան. վասն զի այս ժրաջան ուսումնականաց ձեռօք իրենց մանկունքը գիր գրելէնու կարդայէն սկսեալ մինչեւ երկրաչափութեան, հանրահաշուի

ու եռանկիւնաչափութեան բարձր ու խրթին հաշիւներուն խելք պիտի հասցընեն, բնագիտութեան բնալուծութեան, մեքենաբանութեան ու շարժաբանութեան հրաշալեաց տեղեակ պիտի ըլլան, գրծագրութեամբ, նկարչութեամբ ու միմագրութեամբ կարող պիտի ըլլան որ եւ իցէ ազգօգուտ անձի եւ գործողութեան լիշտակը կենդանի պահել, եւ որ մնձքան զամենայն՝ հայասիրութիւն, ազգային լեզու, պատմութիւն եւ զրագիտութիւն պիտի սովորին հանդերձ զաղղիարէն եւ անգղիարէն լեզուաց, ընդհանուր ազգաց պատմութեան, աշխարհագրութեան եւ տիեզերագրութեան քաջափաք հմտութեամբ :

Մաղրեմք իրենց, ուրեմն, յաջողութիւն յամենայնի եւ քաջառողջ երկարակեցութիւն, որպէս զի առանց մէկ արգելքի կարող լիցին մտքերնուն ու սրտերնուն մէջ եղած գեղեցիկ խորնութղներն ի գործ դնել դիւրութեամբ յօգուտ եւ ի փառս հայկագեան գրոնիս :

## ՍՈ.ՀՄԱՆՔ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՊԵՏՈՎԱՅ Ի ՌԱԽԵԱՆ.

(Եարակարութիւն. Տես էջ 52. 78 172.)

### ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՅՈՅ ԵՊԻԿՈՊՈՍԿԱՆ ԱՏԵԱՆՆԵՐՈՒՆ  
ԵՒ ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆՑ Վ. ՐԱՅ.

Ա. — Եալիսկոպոսական Ատեանք.

### ՀԲ.

Լուսաւորչական Հայոց ամեն մէկ քեմին մէջ այն դաւանութեան համար մէյմէկ եալիսկոպոսական Ատեան կը գտնուի, չորս չորս անդամով, որ են վարդապետ մը եւ երեք աւագերէց կամ քահանայ : Ատենին նախագահը վիճակաւոր Առաջնորդն է :

### ՀԳ.

Հայոց եալիսկոպոսական Ատեաններուն անդամները վիճակաւոր Առաջնորդաց որոշմամբը կը դրուին, եւ անոնք իրենց ըրած ընտրութեանը կը դրուին տեղեկութիւն կուտան էջմիածնի Միւնհովրայ տեղեկութիւն կուտան էջմիածնի Միւնհովրային :

### ՀԴ.

Իւրաքանչիւր քեմի եալիսկոպոսական Ատեան-

ներուն դիւանատունը կազմողներն են Ատենադպիր մը, Թարգման մը, Գործակատար մը, որ միանգամայն Գանձապետի ու Դիւանապետի պաշտօնները կը կատարէ, եւ դիւանատան ծառայութեանը պէտք եղածին չափ սպասաւորներ : Այս պաշտօնատէրները եալիսկոպոսական Ատենին ընտրութեամբը կորոշուին ու վիճակաւոր Առաջնորդին հրամանաւը կը հատատուին : Ատենադպիրն ու գործակատարը պատույ աստիճաններէն տասներորդին մէջ կը գտնուին, իսկ Թարգմանը երկոտասաններորդին մէջ, քանի որ այն պաշտօններուն մէջ կը մնան, եւ թէ որ առաջուց կամ ուրիշ տեղ պաշտօն կատարած ըլլալով՝ աւելի բարձր աստիճաններ չունին :

### ՀԵ.

Հայոց եալիսկոպոսական Ատեաններուն անդամները, եւ անոնց դիւանատուններուն պաշտօնատէրները իրենց ծառայութիւնը ձեռքառնելու ժամանակ՝ հասարակաց օրենսդրութեան համեմատ երդում կը նեն որ հաւատարմութեամբ ծա-

ուայեն վեհափառ կայսեր, եւ իրենց պարտքերը մէջ կատարեն :

Հ. 2.

Գործողութեանցքննուրիւն ու դատաստաններն ընկելու համար՝ Եպիսկոպոսական Ստեաններուն մէջ եւս նոյն կարգը կըպահուի՝ ինչ որ դրուած է էջմիածնի Սիւննողոսին մէջ :

Հ. 3.

Հայաստանեայց Եկեղեցւոյ վիճակաւոր և պիտի կոպոսաց Ստեաններուն ընկած գործողութիւններն ատոնք են .

Ա. Անմիջական վերատեսչութիւն իրենց ձեռքին տակն եղած քահանալից եւ ուրիշ Եկեղեցականաց՝ թիւ ամուսնացելոց եւ թիւ կրօնաւորաց :

Բ. Նոյն վիճակին մէջ զտնուող կղերիկոսական դպրոցներուն, վանորեից, Եկեղեցեաց եւ բարեպաշտական տեղեաց բարեկարգութեանը վրայ հոգատարութիւն :

Գ. Քահանայից եւ ուրիշ Եկեղեցական սպասաւորաց այրիններուն ու որբերուն վրայ խնամակալութիւն :

Դ. Անոնց իշխանութեան տակ եղած վանորեից ու Եկեղեցեաց ստացուածքներուն կառավարութիւն :

Ե. Երբոր անոնց իշխանութեանը տակ եղած Եկեղեցականաց դէմ զանգատներ ըլլան կամ նոյն Եկեղեցականաց մէջ իրարու դէմ վիճ բացուի, այն գործողութիւններուն քննութիւնն ու դատաստանը կտրելը :

Զ. Ամուսնութեանց վրայ եղած խնդիրներուն քննութիւն ու դատաստան, բայց այս նիւթիս վրայ ինչ երկրայական դիպուածներ որ պատահին՝ ամենն ալ էջմիածնի Սիւննողոսին առաջարկելով :

Է. Անոնց իշխանութեանը տակ եղած վանորեից, Եկեղեցեաց, կղերիկոսական դպրոցաց եւ աստրածանոյ կամ բարեպաշտական տեղեաց օգտին համար կամաւոր տուրքեր ժողվելու հրաման տալ բայց իրենց թեմին սահմաններուն մէջ միայն :

Ը. Հրաման տալ օտարական անձանց որ վանքերուն մէջ բնակին՝ թիւ որ իրաւունք ունին այս բանիս (ըստ Ղ.Դ յօդուածոյն) :

Թ. Հոգեւորական եւ վանական տեսչութեանց անդամները իրենց տրուած պաշտօնին մէջ հաստատել :

Ժ. Լուսաւորչական Հայոց Եկեղեցիներուն մէջ կղերիկոսներ հաստատել :

Ճ. Եկեղեցական աստիճան առնելու կամ անկեց հրաժարելու համար պէտք եղած որոշումը էջմիածնի Սիւննողոսին առաջարկել :

Ժ. Բարեպաշտական տեղեր կանգնելու համար վճիռ տալ, եւ նոր վանքեր՝ Եկեղեցիներ ու կղերիկոսական դպրոցներ բանալու հրամանները էջմիածնի Սիւննողոսին առաջարկել :

Ճ. Ճիշդ ցուցակներ շինել թէ որչափ վանք, Եկեղեցի, կղերիկոսական դպրոց ու բարեպաշտական տեղեր կան, ամուսնացեալ ու կրօնաւոր Եկեղեցականաց թիւը որչափ է, ամեն մէկ Եկեղեցւոյ ժողովուրդը որչափ է, ու այն Եկեղեցւոյն քոյ եղած դպրատուններուն մէջ քանի վարժապետ, քանի աշակերտ կան, ու քանի հոգի ողորմութեամբ կապրին :

Ժ. Ամեն տարի մանրամասն տեղեկութիւն տալ էջմիածնի Սիւննողոսին թէ իրենց իշխանութեան տակը եղած վանքերը, Եկեղեցիները, կղերիկոսական դպրոցներն ու բարեպաշտական տեղերը ինչ վիճակի մէջ են, եւ ճիշդ հաշիւ տալ թէ Եկեղեցական ստացուածքները իւրաքանչ կրկառավարուին, եւ իրենց վիճակին մէջի քահանաներն ու ընդհանրապէս Եկեղեցականները ինչ պաշտօններու մէջ են :

Ժ. Ամսական քննութեամբ ստուգել թէ որչափ պատրաստական դրամ եւ դրամական թուղթ կայ իրենց վիճակին մէջ, եւ ինչ որ երեւան զայրագրութեան մէջ նշանակել :

Բ. Հոգեւորական Ստեանք :

Հ. 4.

Խուսաստանի Լուսաւորչական Հայոց վիճակներէն մէկքանիին մէջ եղած Հոգեւորական Ստեանները երեք երեք անդամ ունին . այսինքն մէյմեկ վարդապետ կամ աւագերեց ու երկերկու բանայ :

Ս. Յա ատեաններուն մէջ զրաւորական գործողութիւններն ընողը Թղրապահն է, որ երկոտասաններորդ պատույ աստիճանին մէջ կըզտնուի :

Ճ. 5.

Հայոց Հոգեւորական ատեաններուն անդամոց ընտրութիւնը վիճակաւոր Առաջնորդին ձեռքովք կըլլայ . իսկ Թղրապահները նոյն իսկ Ատեաններուն ընտրութեամբը կորոշուին : Պաշտօնի մտած ատեանին անոնք ամենն ալ երդում կընեն որ հաւատարմութեամբ կատարեն իրենց ծառայութիւնը :

Զ.

Հայոց Հոգեւորական ատեանները անոնց եպիսկոպոսական Ատեաններուն իշխանութեանը տակն են, եւ ամենեւին մէկ գործողութիւն մը չեն կրնար ընել՝ առանց նոյն Ատեաններուն մասնաւոր յանձնարարութեանը :

ԶԱ.

Հայոց Հոգեւորական Ատեանները իրենց իշխանութեանը առկ եղած տեղերուն վրայ ամեն հարկաւոր տեղեկութիւնները կրժողովնեն որ տան իրենց եպիսկոպոսական Ատեաններուն, մասնաւոր անձանց այն խնդիրներն որ Եպիսկոպոսական Ատեաններուն որոշմանը կրվերարերին՝ անոնց կառաջարկեն՝ իրենց կարծիքովը հանդերձ, եւ եկեղեցական Ցուցակներէն վկայագիրներ կը հանեն ու կուտան :

ԶԲ.

Տարւոյն վերջը Հայոց Հոգեւորական Ատեանները իրենց եպիսկոպոսական Ատեաններուն հաշիւ կուտան իրենց զբաղմանը վրայ, եւ անոր նետ մէկտեղ յայտարարութիւններ թէ քանի եկեղեցականք, որչափ եկեղեցիք, որչափ ժողովը զականք կան, քանի նոզի ծներ՝ մեռեր ու պակուեր է, եւ իրենց եկեղեցեաց ստացուածքները որչափ են :

ԳԼՈՒԽ Զ.

ՎԱՐՈՐԵՔ Վ.Բ.Ց.

ԶԳ.

Հայաստանեայց Եկեղեցւոյ ամեն վանքերն ալ, թէ արանց ըլլան եւ թէ կանանց, այս եկեղեցւոյ նին կարգադրութեանը համեատա՛ Մեծին Քարսդի կանոններուն կրնետեւին :

Կրօնաւորեկէն առաջ նորընծայական փորձ եւ կրթութիւն կրվայ՝ որ Հայոց եկեղեցական կարգադրութեանը համաձայն կերպով կը կատարուի: Նորընծայ կրօնաւորաց եւ միանձնուեւաց թիւը այն վանքին մէջ որոշուած թիւէն աւելի պիտի ըլլայ:

ԶԵ.

Ոչ ոք կրնայ կրօնաւոր ըլլալ առանց Էջմիածնայ Սիւնոդոսին որոշման՝ վիճակաւոր Առաջնորդին առաջարկութեամբը :

ԶՀ.

Կրօնաւորութեան վափաքողները երեսուն տարեկանէն պակաս պիտի չըլլան. այս կանոններուն ըլլայու բացառութիւնները՝ միայն մասնաւոր ու կարեւոր պատճառներով կրնան ըլլայ՝ ըստ կանոնաց Հայաստանեայց Եկեղեցւոյ : Մակայն ամենեւին արգելք չկայ վանք մտնելու նորընծայական կրթութեան համար՝ նաև երեսուն տարեկան ըլլայէն առաջ :

ԶԵ.

Կրօնաւոր ըլլալ, եւս եւ նորընծայանալ ուղողը առաջուց պիտի ընդունի այն անձանց կամ տեղեւաց հաւանութիւնը՝ որոնցմէ որ կախուած է: Հարկատու կամ տուրք տուող վիճակի մարդիկը չեն կրնար կրօնաւոր ըլլալ՝ առանց ծերակուտի հրամանին :

ԶԲ.

Ամուսնացեղոց այն ժամանակ միայն հրաման կրտրուի կրօնաւոր ըլլայու՝ երբոր զեռահասակ զաւկըներ չունին, ու երկու ամուսինք եւս կրփափաքին կրօնաւորեկուու :

ԶԹ.

Կրօնաւորական վիճակ մտնողները՝ անով նրածարած կրվան անշարժ ստացուածոց տէր ըլլայէն, կրօնաւորեկէն ետքն եւս չեն կրնար որ եւ իցէ նոր անշարժ ստացուածք ունենալ. բայց արգելք չկայ որ այնպիսի անշարժ ստացուածքներ չգենին յօդուա այն եկեղեցեաց եւ վանորեից՝ որոց կրվերարերին իրենք: Երէ այս տեսակ ստացուածքը կրօնաւորին իյնայ ժառանգութեան իրաւամք, պարտաւոր է զայն յանձնելու կամ ծախելու վեց ամսուան ժամանակի մէջ :

Ղ.

Կրօնաւորներուն արգիլուած է որ եւ իցէ վաճառքով առուտուր ընելը. միայն իրենց յատուկ ձեռագործները կրնան ծախել, այն եւս իրենց Առաջնորդին հրամանաւը :

ՂԱ.

Կրօնաւորին մահուընէն ետքը մնացած որ եւ իցէ շարժական ստացուածք՝ անոր վանքին կիյնայ՝ թէ որ կտակ չէ ըրած ու ինքը օրինաւոր ժառանգներ չունի .

ՂԲ.

Սյն կրօնաւորներն որ Հայաստանեայց Եկեղեցւոյ սահմանադրութեանց զօրութեամբը բոլոտուութիւն կը նունին իրենց կոչմաննեն ելլայու, քաղաքական վիճակի դարձած ստեննին՝ այն իրաւունքները միայն կրնան վայելելոր ծննդեամբ ու սերնդեամբ սեպհական են իրենց, եւ նորէն

չեն ընդունիր այն արտօնութիւնները, աստիճաններն ու մեծութիւնները՝ զորս կրնային ձեռք ձգել կրօնաւորեկեն առաջ, և ոչ այն ստացուածքներն որ ժառանգութեամբ մնացած են իրենց կամ կրօնաւորեկեն առաջ իրենք արդարութեամբ վատրկեր են :

## Դ.Գ.

Ամէն վանքի մէջ կրօնաւորներուն թիւը որոշուած պիտի ըլլայ, և ամէն տեղ կրօնաւորք՝ կուսանք ուրեն պակաս պիտի ըլլան : Խսկ որ վանքերն որ կրօնաւրաց թիւը որոշ չէ՝ Էջմիածնայ Սիւնհողոսը վիճակաւոր Առաջնորդին առաջարկութեամբը՝ անոնց եկամուտներուն համեմատ այս բանիս համար ձիշդ կանոններ կըսահմանէ :

## Դ.Դ.

Հայոց վանքերուն մէջ՝ կրօնաւրաց և նորընծայից՝ թէ արանց եւ թէ կանանց՝ որոշեալ թիւն ի զատ, կրնան բնակիլ, վիճակաւոր Առաջնորդին հրամանաւը, արանց վանքերուն մէջ ծերացած եւ անօգնական քահանայք եւ պաշտօննեալք, հոն կապրին որ կընանգչին . նոյնակս հոն եկեղեցական պաշտամանց կրնան վարդիկ չքաւոր եկեղեցականաց որդիքը, մասնաւանդ որբերը . խսկ կանանց վանքերուն մէջ անօգնական այրիները, եկեղեցականաց դստերքն ու տարիքնին առած օրիորդներ, ինչպէս նաև դեռահասակ այրիներ՝ կըրութիւն տալու եւ ձեռագործ սովորեցընելու համար :

## Դ.Ե.

Հայոց վանքերը վիճակաւոր Առաջնորդաց անմիջական ու լիսաւատար իշխանութեանը տակ են, և պարտական են տարուէ տարի մանրամասն հաշիւ տալու անոր իրենց ամէն գործողութեանցը վրայ : Վանական մեծաւորաց դէմ եղած գանգատները վիճակաւոր Առաջնորդաց կըմատուցուին :

## Դ.Զ.

Վանքերու համար կամաւոր տուրք ժողովելը, միայն վանքին գտնուած տեղը կրնայ լինել, այն եւս ամէն անգամ վիճակաւոր Առաջնորդին մասնաւոր հրամանաւը . խսկ Առուսաստանի Հայոց ուրիշ վիճակներուն մէջ ողորմութիւն ժողվելը, Էջմիածնայ Սիւնհողոսին որոշմամբը կըլլայ՝ վիճակաւոր Առաջնորդին առաջարկութեամբ : Երբ եւ ինչ բանի համար եւս լինի, այսպիսի տուրքեր ժողվելու համար նոյն տեղին քաղաքական իշխանութենէն խսկ հրաման առնելու է :

## Դ.Յ.

Հայոց վանքերուն կառավարութիւնը՝ արանց վանքերունը՝ Առաջնորդներու ձեռք է, որ են վարդապետք կամ վանահարք, և կանանց վանքերուն՝ Մայրապետաց ձեռք : Թէ վանահարք եւ թէ մայրապետք վիճակաւոր Առաջնորդաց ընտրութեամբը կորոշուին, ու Էջմիածնայ Կարուղիկոսին հրամանաւը կընաստատուին :

## Դ.Ֆ.

Հայոց վանահայրերն ու մայրապետները վանական գործողութիւնները մինակ չեն կատարեր, այլ միշտ գործակցութեամբ վանական ժողովոց, որոց նախագահ են վանահայրը կամ մայրապետը, և երկու ծերագոյն ու պատուաւոր միանձունք կամ միանձնունիք՝ որ վանահօրը կամ մայրապետին առաջարկութեամբը վիճակաւոր Առաջնորդին կընաստատուին :

## Դ.Թ.

Հայոց վանքերուն վանահայրերն ու մայրապետները իրենց գործակիցներուն նետ մէկտեղ կընային որ վանքին մէջ եկեղեցական կանոններն ու վանական սահմանադրութիւններն կատարուին, և վանքին շարժական եւ անշարժ ստացուածքները ամբողջ պահուին . անոնք պատախանատու են եկամուտներուն օրինաւոր գործածութեանն ու ընդհանրապէս իրենց յանձնուած վանքին բարեկարգութեանը համար :

## Ճ.

Վանական ժողովը վանքին ամէն եկամուտներուն ու ծախքերուն պէտք եղած հաշիւները կըզքէ, ու վանքին բոլոր շարժական եւ անշարժ ստացուածքը ցուցակին նետ մէկտեղ տարուէ տարի վիճակաւոր Առաջնորդին քննութեանը կըմատուցանէ :

## Ճ.Ա.

Երբոր վանահայր մը կամ մայրապետ մը մեռնի կամ փոխուի, վանական ժողովը քանի մը ծերագոյն կրօնաւորաց կամ միանձնուեաց գործակցութեամբը վանքին բոլոր ստացուածոց ձիշցուցակը կըշինէ ու վիճակաւոր Առաջնորդին կըմատուցանէ : Նոր վանահայրը կամ մայրապետը պաշտօնը յանձն առած ժամանակը այն ցուցակին համեմատ կընդունի վանահայրութիւնը կամ մայրապետութիւնը :